

## Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

### ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ.

#### Զ.

#### ԱՒԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԸ:

**Ա**ՒԵՏԱՐԱՆԻ հիմնական սկզբունքները որոշելուց յետոյ՝ պէտք է ցոյց տանք, թէ ինչպիսի արտա-յայտութիւն են դառել դժբա իրական կեանքի մէջ՝ ինչ յարաբերութիւններ և խնդիրներ յառաջ բերել: Արդէն նա ինքն իւր ամբողջութեամբ կեանքի մի նոր պայման լինելով՝ եղածը յեղաշրջելու դիտաւորութեամբ հանդէս եկած, պէտք է ընդհարուէր անպատճառ բնական աշխարհի հետ, և ուրեմն նորա հետևողների համար առաջին հարցն այն էր, թէ ինչպէս պէտք է վերաբերուեն դէպի ներկայ աշխարհի պահանջները: Այդ հարցը շատ վաղ դրուեցաւ յիրաւի և դժուարից ծագեց ճգնութեան խնդիրն իւր բազմադիմի երևոյթներով: Արդ, ինչ պատասխան է տալիս Քրիստոսի քարոզած ճշմարիտ աւետարանն այդ հարցին:

Խիստ տարածուած ու ընդհանրացած մի կարծիք է այժմ, թէ աւետարանը սովորեցնում է փախչել աշխարհից և ճգնական կեանք վարել: Ոմանք ուրախ են որ այդպէս է և իրենց համակրանքն ու հիացմունքը աւետա-րանի հակաշխարհային ուղղութեան համար այնտեղ են հասցնում, որ դժուար մէջ և տեսնում են նորա բոլոր ար-ժէքն ու առաւելութիւնը: Ուրիշներն այդ ուղղութեան վերայ շեշտելով կամենում են ապացուցանել, որ քրիս-տոնէութիւնը ժամանակի ոգուն և բարոյական սկզբունք-

ներին չի համապատասխանում, ուրեմն և պէտքական չէ՝ վերջին տեսակէտից են նայում, օրինակ, շատերը մեծա-  
նուն Տօլստոյի գրուածների վերայ, և դորանով կարելի է  
բացատրել որոշ շրջաններում նոցա ունեցած հրապոյրը։  
Իւր մեծ տաղանդի ուժովն ու խորաթափանց զգայուն  
գրչով նա գիտէ այնպիսի գաղափարական բնաւորութիւն  
տալ աւետարանից հանած ճգնական սկզբունքներին, որ նո-  
քա խոր տպաւորութիւն են գործում «կրթուած» ընթեր-  
ցողների վերայ և ըստ երևութին պէտք է ոգևորէին ու  
իրենց հետևելու դրդէին, սակայն իրօք այդ ընթերցող-  
ներն ուրախանում են իրենց սրտի խորքում և հանդը-  
տանում, թէ ուրեմն իրենք գործ չունին քրիստոնէութեան  
հետ և ազատ են նորա պահանջներից, քանի որ նա աշ-  
խարհատեցութիւն է քարոզում, իսկ իրենք աշխարհի  
մարդիկ են՝ պարզ ճանաչում են իրենց իրաւունքը մնալ  
այս աշխարհում և վայելել նորա բարիքները։ Եթէ քրի-  
ստոնէութիւնը ներկայ կեանքի համար ոչ մի նպատակ չի  
գտնում, երկրաւոր բարիքներն առ ոչինչ է համարում և  
ամէն բան մի ինչ որ հանդերձեալ կեանքի համար է թող-  
նում՝ ապա հասկանալի է, թէ ինչու իւրաքանչիւր զօրեղ  
բնաւորութեան ու եռանդի տէր մարդ մի տեսակ արհա-  
մարհանքով կնայի նորա վերայ, չէ որ ինքը համոզուած  
է, թէ իւր եռանդն ու ընդունակութիւնները այս աշխար-  
հում գործադրելու և նորա վերայ իշխելու համար են  
տրուած։

Սակայն արդեօք ճշմարիտ է աւետարանի աշխարհա-  
տեաց լինելն, և ի՞նչ իմաստով ու ի՞նչ չափով։ Հարկաւ  
պակաս չեն նորա մէջ այնպիսի ասացուածներ, որոնք կա-  
րող էին ընդունուել իբրև հրաւեր դէպի ճգնական կեանք։  
«Եթէ աչքդ քեզ գայթակղեցնում է, հանիր. գայթա-  
կղեցնում է ձեռքդ, կտրիր դէն ձգիր»։ «Ինչ ու վա-  
ճառիր բոլոր ունեցածդ, և ապա դանձ կգտնես երկրն-  
քում»։ «Եթէ մէկը գալիս է ինձ մօտ ու պատրաստ չէ քա-  
ղու իւր հօրն ու մօրն ու կնոջն ու զաւակներին ու եղբայրնե-  
րին ու քոյրերին, այլ և իւր սեփական անձը՝ չի կարող իմ-

աշակերտը լինելը: Այսպիսի և նման խօսքեր եթէ առնենք՝  
թուում է թէ աւետարանի ճշնական ու աշխարհատեաց  
բնաւորութիւն ունենալն անվիճելի է: Բայց աւետարանը  
ասացուածների ժողովածու չէ, այլ մի կենդանի ամբող-  
ջութիւն, որի մասին ուղիղ գաղափար կազմելու համար  
ոչ թէ հատ հատ խօսքեր պէտք է առնել, այլ ընդհանուր  
հիմնական գծեր, և կտեսնենք որ նոքա բոլորովին տար-  
բեր գաղափար են տալիս մեզ ու յիշեալ ժանրամաս-  
նութիւններն ևս իրենց իսկական նշանակութիւնն են  
ստանում: Դիտենք ամէնից առաջ, թէ ինքը Քրիստոս  
ինչպէս էր ներկայանում հրապարակի վերայ, ինչպիսի  
կեանք էր վարում և ինչ ճանապարհ էր գծում իւր հե-  
տեօղների համար:

Աւետարանների մէջ Նորա մի շատ դարմանայի խօս-  
քը կայ. «Յովհաննէս եկաւ, չէր ուտում և չէր խմում,  
ու ասում են՝ դիւտ է: Մարդոյ Որդին եկաւ, ուտում  
է և խմում, ու ասում են. Այ՛ ձեզ ուտող խմող մարդ»:  
—Ուրեմն Նորան ուտող խմող են անուանել, և այդ եղել է  
Նորան տրուած նախատական անուաններից մէկը: Այստեղից  
պարզ երևում է, որ Նա ուրիշ նիւտ ու կաց է ունեցել  
և ուրիշ տպաւորութիւն գործել, քան ապաշխարութեան  
նշանաւոր խոտակեաց քարոզիչը Յորդանանի ափերում:  
Նա յաճախում է անխտիր թէ հարուստի և թէ աղքատի  
տունը, ընտանիքի մէջ է լինում, կանանց ու երեխաների  
հետ նստում, հարսանիք դնում: Նորա ոտները լուանում  
են և գլուխն անուշահոտ իւղով օծում, Նա երեսը շուռ  
չէ տալիս ոչ ոքից, կարիք չի զգում դիմելու այն միջոց-  
ներից որ և է մէկին, որոնք սովորական են եղել ամէն  
ժամանակի ճշնաւորների համար: Նա բալոր իրեն հաւա-  
տացողներից չի էլ պահանջում, որ ամէն բան թողնեն և  
իւր ետեւից գնան, անշուշտ Բեթանիացի Ղազարի ու նո-  
րա քոյրերի պէս շատերը կային, որոնք իրենց տանը և  
իրենց կոչման մէջ մնալով՝ ապրում էին Նորա ներշնչած  
հաւատով, և ոչ պակաս պատկառանք տածում դէպի Նա  
ու սէր վայելում Նորանից, քան Նորա անմիջական հե-

աւելցնեցրէ՝ Նա գիտէ ամենահեռաւոր անկիւններում ու անսպասելի տեղերում ճշմարտութեան ծարաւ հոգիներ գտնել, — և ուր կարող էր իւր աւետարանը լսելի անել ու կեանքի մի դուռ բանալ՝ ամբաւ ուրախութիւն էր Իւր հոմար։ Նա մինչև իսկ իւր աշակերտներին խմբից մի կրօնաւորական կարգ չկազմեց և խիստ կարգ ու կանոնի տակ չդրաւ նոցա առօրեայ կեանքը։ Նոցա կենցաղավարութեան պայմանների մէջ մենք ոչ մի արտաքին ճնշում, ոչ մի խտրականութիւն, ոչ մի կաշկանդող հանգամանք չենք գտնում, և ազատութեան այն ոգին, որ շնչում է առհասարակ աւետարանի ամէն մի խօսքից՝ կասկածի տեղիք չի թողնում, թէ նորա ճգնական գոյն ունեցող դարձուածներն այլ կերպ պէտք է ըմբռնուին, քան թուում են հարեանցի կերպով վերաբերուողին։

Նաև առաքելական բոլոր ստացւած աւանդութիւնները պարզ վկայում են, որ Փրկչի անմիջական աշակերտները Նորան իբրև ճգնաւոր չեն ընդունել և աշխտհատեցութեան ու կրօնաւորութեան հրահանգներ չեն ստացել Նորանից։ Բաւական է յիշել Պօղոս առաքեալի այն յիշատակութիւնը, թէ Պետրոս առաքեալն ու ուրիշները, նոյն իսկ առաքելական ճամբորդութեանց միջոցին՝ իրենց կանանց հետ ներն էին առնում։ Նոքա հետևում էին այն սկզբունքին, թէ մշակն իւր վարձքին արժանի է, և ուր հարկը չէր ստիպում կամ մի բարոյական պահանջ չկար զրկելու իրեն աշխարհային կեանքի բարեբերից՝ չէին զրկում։ Եթէ առաջին հաւատացողների մասին պատմուած է, որ իրենց ունեցածը վաճառում, գինը առաքեալների տրամադրութեան ներքոյ էին դնում՝ յօգուտ համայնքի գործածելու համար, որ նոքա մի ընդհանուր սեղանից էին ուտում, միասին աղօթում, միմեանց մէջ բաժանում իրենց ուրախութիւնն ու տխրութիւնը, — այդ արդիւնք էր անշուշտ այն բռնն ոգևորութեան, որ յառաջ էր բերել նոցա մէջ խակական յորդառատ ազբիւրից ելած սիրոյ և եղբայրութեան քարոզը, որ նոցա անդադար մղում էր «զվերինն խնդրել», թեթեանալով ըստ կարելոյն անցաւոր աշխարհի

Հագսերից: Ապա թէ ոչ առաքելական գրուածներում իշխող համոզմունքն է, թէ իւրաքանչիւր հաւատացեալ պէտք է ծառայէ Տիրոջ այն կոչմամբ և այն շնորհներով, որ ստացել է նորանից, և մնալով այն պայմաններին մէջ, որտեղ դրել է նորան նախախնամութիւնը:—Որչափ տարբեր է եղել բուդդայականութեան բռնած ընթացքը իւր ծաւալման առաջին օրերից և եթէ:

Այս բոլորից յետոյ պէտք է յիշել նաև մեր ասածներն աւետարանի հիմնական դադափարների մասին: Մի կրօն, որ ամենասերտ յարաբերութիւն է հաստատում Աստուծոյ և մարդոց մէջ և այդ յարաբերութիւնը պահպանելու համար պահանջում է միայն անպայման խոնարհութիւն Աստուծոյ առաջ և կատարեալ սէր դէպի ընկերը՝ կարօտ չէ այլ ևս ճշնական կանոնների ու վարժութիւնների: Սոցա նպատակն է հաճոյ լինել Աստուծուն՝ մարմնական ցանկութիւնները զսպելով, իսկ աւետարանը նոյն նպատակին հասնելու աւելի ուղիղ և ապահով ճանապարհ է ցոյց տալիս,—աստուածային շնորհաց ապուխնելով բարոյապէս զօրանալ և հողւով բարձրանալ այնչափ, որ մարմինը նորա կամակատար դործիքը դառնայ և իւր ստոր հակումները առաջ տանելու ոյժ չունենայ՝ որ Աստուծոյ կամքը ամենայն հաճութեամբ կատարուի և որ և է ներքին ընդդիմութեան չհանդիպի: Յիշաւի նա նկատում է աշխարհի մէջ երեք մեծ թշնամիներ, որոնց հետ իւրաքանչիւր քայլափոխում հաշիւ պէտք է ունենանք, բայց սովորեցնում է ոչ թէ փախչել նոցանից, այլ կռիւ մղել նոցա դէմ: Այդ ազնիւ բարոյական մաքառումն է ահա, որ յաճախ շփոթուում է աշխարհատեսչութեան հետ և որ ուրեմն լաւ հասկանալ պէտք է՝ երկու դադափարներն իրարից որոշ կերպով տարբերելու համար:

Առաջին մեծ թշնամին մոմօնան է: Այդպէս է անուանում Փրկիչն աշխարհի բոլոր նիւթական բարիքը, բոլոր դրամական կարողութիւնն՝ իբրև մի ամբողջութիւն վերցրած, որ ձգտում է իշխել մեզ վերայ և ապա ուրիշների վերաբերմամբ բռնաւորներ է դարձնում: Մամոնան

կամ գրամը նիւթական զօրութեան մարմնացումն և ի մի ձուլուած ըռնութիւն է. ուստի Փրկիչն անձնաւորեալ կերպով է պատկերացնում այն՝ իբրև զէնք ու զրահով պատած մի թշնամի, մի թագաւոր, — իբրև սատանան ինքը իւր դժոխային իշխանութեամբ. ենթարկուել նորա բռնութեանը, ծառայել նորան՝ նոյն է թէ հեռանալ Աստուծոյ և մասն ու բաժին չունենալ երկնքի բարեքներին, որովհետև «Երկու տէրերի ծառայել չի կարելի»։ Եթէ մամնային պատկանող կամ իւր իշխանութեան սահմաններում գտնուող բաներին մէկն ու մէկը այնպիսի մեծ արժէք է ստանում մարդու աչքում և այնչափ գրաւում նորա սիրտը, որ չի կամենայ այլ ևս ոչ մի պայմանով ձեռքից թողնել այն, կնշանակէ չզթայած ու կապկպուած մի գերի է նա արդէն։ Ապա ուրեմն քրիստոնեան զգալով վտանգի մեծութիւնը, պէտք է երբէք առուտուր չանէ մամնայի հետ, այլ բոլոր ուժով կռուէ նորա դէմ, հեռու վանէ իրանից։ Անշուշտ, եթէ Յիսուս քարոզելու ելնէր այսօր՝ ամէնքին անխտիր չէր ասի. Հրաժարուէք ձեր ունեցածից, բայց երբ ենթադրում ենք, որ շատ շատերին կասէր և հետևող դժուար կգտնուէր՝ լաւ կլինի մի քիչ խոր մտածենք այս մասին ու ամենեւին բարի նշան չհամարենք։

Երկրորդ թշնամին հոգսն է։ Դուցէ ոմանց տարօրինակ կթուի, թէ ինչու Յիսուս հոգսը իբրև մի զարհուրելի թշնամի է ներկայացնում՝ իբրև միայն հեթանոսութեան յատուկ բան։ Հարկաւ հոգս չի անուանում՝ նա հոգեկան այն վիճակը, որի մէջ լի վստահութեամբ մենք Երկնաւոր Հօրը դիմել և իւր ուսուցած աղօթքը կրկնել կարող ենք. «Ձեաց մեր հանապազորդ տնւր մեզ այսօր»։ Այլ այն հոգսի մասին է խօսքը, որ մեզ խեղճացնում, առօրեայ կարիքների ստրուկն է դարձնում՝ որի շնորհիւ մենք մաս առ մաս կուլ ենք գնում աշխարհի մէջ և կօրցնում ընդունակութիւնը նիւթականից բարձր բաների վերայ մտածելու։ Փրկիչը նկատում է այն իբրև մի ոճիւր Աստուծոյ դէմ, որի հայրական խնամոց առարկայ են երկնքի թըռչուններն անգամ՝ մի որդի, որ կրծում կարտում է մեր

որտի դէպի Երկնաւոր Հայրը ձգող կապերը, ոչնչացնում դէպի Նա ունեցած որդիական վստահութիւնը, և այդպէս մեր ներքին էութեան հիմքը քանդում: Մենք պէտք է այս կէտում ևս խոստովանենք, որ եթէ Փրկչի վարդապետութիւնն իւր ամբողջ ընդարձակութեամբ և հետեւութիւններով հասկանալի չէ մեզ համար՝ այդ նշանակում է միայն, թէ այնպէս խոր կերպով չենք զգում և այնպէս լուրջ կերպով մտածում, ինչպէս պէտք է: Արդեօք ո՞րն է իրաւացի,—Նորա այն անպայման և անողորմ պատուէրը՝ «մի հոգաք», թէ մեր զանազան մեղմացուցիչ բացատրութիւնները՝ Յամենայն դէպս մենք չենք կարող չզգալ, որ մարդս այն դէպքում միայն խկապէս ազատ, ուժեղ և անպարտելի է, երբ ամէն հոգս վրայից թօթափել և Աստուծուն է ապաւինել: Ի՞նչպիսի ներքին զօրութեան տէր և ինչե՞ր անելու ձեռնհաս չէինք լինի մենք, եթէ հոգս չունենայինք:—

Դառնանք վերջապէս դէպի երրորդ ամենավտանգաւոր թշնամին՝ եսասիրութիւնը: Այստեղ ևս անձնութեան է Փրկչի դրած հակառակ պահանջը, և ոչ թէ ճշմարտութիւնը: «Եթէ աչքդ քեզ դայթակղեցնում է, հանիր. եթէ ձեռքդ դայթակղեցնում է, կտրիր դէն ձգիր»: Ամէն անգամ, երբ քո մէջ մի հակում, մի կիրք այնչափ զօրանում է, որ սկսում է գռռակացնել քո բնութիւնը, միջնացնել առողջ դատողութիւնդ և քեզ հաճոյքի ծառայ դարձնել՝ պարտական ես խեղդել տեղն ու տեղը, ոչ թէ Նորա համար, որ քո բնութեան խեղումները հաճելի են Աստուծոյ, այլ որ ուրիշ կերպ ազատել չես կարող բարին քո մէջ: Ծանր խընդիր է այս, որը լուծելու համար սակայն կարիք չկայ ամէն բանից ձեռք քաշելու, անապատ փախչելու և ճգնելու. ուր գնանք, փորձիչը կհասնի ետևից և փորձութեան բունը՝ մեր եսական զգացումը, հետներս է. այլ մաքառում պէտք է նորա դէմ՝ պատրաստակամութիւն վճռական ընդդէմ հարկաւոր զոհը բերելու: Զոհաբերութիւն և անձնութեան՝ իւր կեանքն անգամ չխնայելու չափ, ահա այն էական պայմանը, որ աւետարանը անհրաժեշտ է տեսնում:

Թէ այս և թէ բոլոր յիշեալ բարոյական թշնամիներն դէմ յաղթութիւն տանելու համար։ Իսկ զոհ կարելի է անուանել այն միայն, ինչ որ մեր աչքում գին ունէր։ Եթէ մենք ճգնական հայեացքով նայէինք աշխարհի վերայ և ունայն ու առ ոչինչ համարէինք նորա բարիքները, զոհաբերութեան խնդիր չէր լինի այլ ևս։ Բայց ս. Գիրքն ուսուցանում է, որ «Տիրոջն է երկիրը և նորա վերայ եղած ամէն ինչ», որ Արարչի ձեռքի տակից ելած ամենաշնչին իրն անդամ իւր տեղն ու արժէքն ունի և իւր պատշաճ գործադրութիւնը պէտք է գտնէ մեր ձեռքով։ Ապա ուրեմն մի կողմից պէտք է ոչինչ չարհամարհուի և միւս կողմից ոչինչ այնպիսի նշանակութիւն չստանայ մեր աչքում, որ չկարողանայինք հրաժարուել նորանից, երբ հարկը, երբ մեր բարոյական պարտականութիւնը, երբ Աստուծոյ պատուէրը պահանջէ Յամենայն դէպս այն աւետարանը, որ անձնուրացութիւն ու անձնադոհութիւն է սպասում իւր հետևողներից՝ ամենամեծ բանն «իւր մարմինն այրել տալը և իւր ունեցածն աղքատներին բաժանելը» չի համարում։ Սիրոյ աւետարան է նա և գնահատում է միայն սիրոյ զօհը։

Կ. Վ.



## ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

Գլուխ Գ.

ՅԱԿՈԲ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԶՈՒՂԱՅԵՑԻ

(1655—1680)

Փիլիպպոս սրբազան կաթողիկոսի թաղման առթիւ ս. Էջմիածնում հաւաքուած հոգևորականները և աշխարհական-